ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԿՆՅԱԶ ՍԱՐՈՅԱՆ

Հայաստանում քաղաքական համակարգի կերպափոխմամբ պայմանավորված՝ արդի իրողությունների ընկալման, սահմանման ու մեկնաբանման համար մեծ կարևորություն ունի ընտրական գործընթացներին և առհասարակ ընտրական մշակույթին անդրադարձը՝ որպես ժողովրդավարության կարևոր տարրերից մեկը: Ընտրական մշակույթն առանցքային ցուցիչ է և արտացոլում է այդ գործընթացում ներառված սուբյեկտների՝ ընտրողների և ընտրվողների վերաբերմունքը, պատկերացումներն ու ձգտումները ժողովրդավարական միջավայրը սահմանող կարևորագույն արժեքների մասին: Անցումագիտության մեջ հատկապես հետխորհրդային երկրներում ընտրական գործընթացների կարևորությունը մեծ է եղել անցման առաջին փուլում[1]: Ընտրությունների միջոցով լիբերալ ընտրախավն իշխանության եկավ առանց արյունահեղության և բացառապես իրավական, օրինական ճանապարհով[2]: Եթե անցման սկզբում ընտրական ինստիտուտը կարևոր հիմքեր էր երաշխավորում հաջող մեկնարկի համար, ապա ժողովրդավարության հետագա կայացման ու համախմբման առումով այդ ինստիտուտը բոլորովին այլ դերակատարում ստացավ: Առնվազն վերջին երկու տասնամյակում ընտրությունները, ընտրական իրավահարաբերությունների կարգավորումը, դրանց օրինականությանը վերաբերող հարցերն ամենավիճահարույցը դարձան: Բավական է նշել, որ անկախ Հայաստանում անցկացված վեց նախագահական և վեց խորհրդարանական ընտրությունների արդյունքների օրինականության հարցը առնվազն 10 անգամ վիճարկվել է Սահմանադրական դատարանում, իսկ գործընթացի հետ կապված բազմաթիվ այլ հարցեր վիճարկվել են

[1] Տե՛ս **Տ. Թորոսյան, Հ. Սուքիասյան,** Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները // Հայկական քաղաքագիտական հանդես, 2014, 1(1), էջ 19-32:

[2] Տե՛ս **Алексанян А**. Цивилиархические основы демократизации политического режима в Армении // "Центральная Азия и Кавказ". 2011, том 14, выпуск 2, էջ 139, **Искандарян А**. Армения между автократией и полиархией // "Pro et Contra", 2011, май-август,էջ 20-21:

ավելի ցածր ատյանների դատարաններում: Հայաստանյան փորձը ցույց է տալիս, որ ընտրությունների պաշտոնական արդյունքների հանդեպ անվստահությունը ոչ միայն հաստատութենականության մակարդակում է մտահոգիչ: Գործընթացի լեգիտիմության հանդեպ լուրջ կասկածները հարուցել են անվստահության բարձր մակարդակ՝ հանգեցնելով քաղաքական դաշտի խիստ բևեռացվածության, հակադիր, իրարամերժ ճամբարների առաջացման, քաղաքական ուժերի, դերակատարների միջև հակամարտ տրամադրությունների առաջացման: Պատճառներից մեկը թերևս այն է, որ երբ նախորդ համակարգի կայունությունն ապահովող գաղափարաքաղաքական արժեքները, սոցիալ-քաղաքական կյանքի կազմակերպման նորմերն ու ինստիտուտները կորցրել են իրենց նշանակությունը, իսկ ձևավորվող նորը դեռ բյուրեղացած չէ ու հիմնականում անորոշ է, հասարակությունն ընտրությունները դիտում է որպես առկա բոլոր խնդիրների լուծման միակ տարբերակ: Այս ամենը վերածվել է յուրօրինակ մեսիայի սպասման, իսկ քաղաքական ուժերը՝ հատկապես ընդդիմադիր դիրքերից հանդես եկողները, բոլոր ընտրությունների ժամանակ այն օգտագործել են ի շահ իրենց քաղաքական նկրտումների: Նախընտրական և հետընտրական շրջաններում այդ ամենը դրսևորվել է ոչ թե գաղափարական ու ծրագրային տարբերությունների շեշտադրմամբ, այլ առավելապես քաղաքական սուր ընդգծված և կոնֆլիկտային բնույթի խոսույթով: Ընդդիմության դեպքում գերակշռել են իշխանությանն ուղղված ամենատարբեր ձևակերպումներով պիտակավորումները, ինչպես օրինակ՝ «կեղեքող», «թալանչի», «սեփական կլանային շահերով առաջնորդվող», «ավազակապետություն», «հանցավոր ռեժիմ» և այլն: Իշխանության քաղաքական խոսույթում էլ ընդդիմությունը միշտ բնութագրվել է որպես «ապակառուցողական», «թույլ կազմակերպված», «արտաքին ազդեցություն կրող շարասյուն» և ընդհանրապես՝ ներքաղաքական կայունությանը սպառնալիք ներկայացնող: Այս պայմաններում քաղաքական պայքարը տեղափոխվել է առավելապես ուժային հարթություն: Իշխանության ձեռքին միշտ եղել է լեգիտիմ բռնություն գործադրելու իրավունքը, իսկ ընդդիմությունը հակադրման միջոց է ընտրել փողոցը՝ հանրային մոբիլիզացիան: Երրորդ կողմում գտնվող հասարակությունն իրավիճակին արձագանքել է քաղաքական համակարգի, ինստիտուտների, կառավարող խավի հանդեպ վստահության կորստով, հուսալքությամբ, օտարվածությամբ: Քաղաքական պայքարի կանխատեսելի գործիքակազմով ու մարտավարությամբ ընդդիմությունն ըստ էության տարբեր ժամանակներում իշխանության համար չի եղել լուրջ մրցակից՝ ո՛չ գաղափարական և ո՛չ էլ ռեսուրսների ու հնարավորությունների տեսանկյունից: Այս պայմաններում Հայաստանում իշխանության ձևավորման և իրացման գործընթացներն առավելապես տեղի են ունեցել իշխանական ուժերի, ներիշխանական պայմանավորվածությունների շրջանակում, իսկ քաղաքական որոշումների ընդունումը, իրականացումը, իշխանության կադրային քաղաքականությունը և

առհասարակ ընտրանու ձևավորումը եղել են փակ մոդելով՝ գործնականում դուրս թողնելով թե՛ հանրային լայն շերտերը և թե՛ ընդդիմությանը՝ որպես քաղաքական այլընտրանքի օրակարգ սահմանողի: Փորձագիտական տարբեր գնահատականներով ևս արձանագրվում է, որ անցումային Հայաստանի թե՛ առօրյա կյանքի և թե՛ ներքաղաքական հարաբերությունների բնորոշ գծերից են անկայունությունը, առճակատումներն ու օտարվածությունը[3]: Առկա ճգնաժամի վկայություն է այն, որ սոցիալական կյանքն ընթանում է անորոշության պայմաններում, և հասարակական ու քաղաքական համակարգերը մարդկանց չեն առաջարկում սոցիալիզացիայի հստակ ուղիներ ու միջոցներ[4]: Ակնհայտ է, որ այս ամենն արդեն բավարար է՝ արձանագրելու, որ քաղաքական երկխոսության մշակույթը, որը հատկապես ենթադրում է պայմանավորվելու, միմյանց սուբյեկտայնությունը ճանաչելու և ընդունելու պատրաստակամություն, Հայաստանի իրականության մեջ դեռևս չի դարձել քաղաքական դերակատարների նպատակամետ գործունեության ձև: Անգամ երբ իրավական մեխանիզմներն անզոր են եղել կոնֆլիկտային իրավիճակին լուծում առաջարկել (1996 թ., 2008 թ.), և միակ ռացիոնալ տարբերակը մնացել է կոնֆլիկտային իրավիճակի կարգավորման ոչ ինստիտուցիոնալ, բայց մեծ արդյունավետություն ունեցող տարբերակը՝ քաղաքական երկխոսությունը, թե՛ իշխանություն-ընդդիմություն, թե՛ իշխանություն-հասարակություն մակարդակներում և թե՛ ընդդիմության տարբեր թևերի միջև, քաղաքական դերակատարների համար այն չի դարձել փակուղուց դուրս գալու միջոց: Այս պայմաններում, երբ ներքևից (հասարակություն, քաղաքական ընդդիմություն) չի ձևավորվում քաղաքական երկխոսության պատվեր կամ ռեսուրս չկա այն ձևավորելու համար, ապա «իշխանություն» հասկացության տրամաբանությունը հուշում է, որ կառավարող ընտրախավը պետք է դառնա առաջադեմ և վերևից նախաձեռնի իրավիճակի փոփոխություն: Հասարակական-քաղաքական կյանքին բնորոշ «հակադրման գծեր»-ին տարամիտվող այլընտրանք գտնելու գործիքարանը պետք է ենթադրի ոչ միայն կոնֆլիկտային իրավիճակների լուծում զուտ ինստիտուցիոնալ և իրավական կարգավորումներով (այդպիսի հնարավորություն է տալիս 2015 թ. դեկտեմբերին ընդունված նորացված Սահմանադրությունը), այլ նաև քաղաքական երկխոսության լայն գործիքարանի կիրառում: Իշխանության իրականացման մենախոսական և իմպերատիվ գործելաոճը (քաղաքականության ընկալումը բացառապես «խաղ զրոյական գումարով» կամ «դիմացինի կապիտուլյացիա») լուրջ մարտահրավեր է քաղաքական համակարգի հետագա ժողովրդավարացման համար: Եթե նախկինում քաղաքական համակարգի ու նրա ինստի-

---

[3] Տե՛ս **Հ. Հովհաննիսյան,** Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները //«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 23-29:

[4] Տե՛ս **Գ. Հարությունյան,** Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրը անցումային հասարակությունում // «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 3:

տուտների հանդեպ չեզոքություն ցուցաբերող քաղաքացու մոդելը բավարարում էր այդ ժամանակաշրջանի հրամայականներին, ապա ներկայումս քաղաքական համակարգի ու դրա կառուցակարգերի հանդեպ վստահությունը կորցրած, ժողովրդավարության ընթացակարգերից դժգոհ և համակարգից օտարված քաղաքացու հետ գործ ունենք[5]: Այդ պայմաններում քաղաքական ընտրախավերին ներքևից ոչ միայն արդյունավետության և հաշվետվողականության պահանջ է ներկայացվում, այլ նաև իրենց սուբյեկտայնությունը ճանաչելու խնդիրն է դրվում: Պարզ է, որ հակադիր ճամբարներում գտնվողները միմյանց սուբյեկտայնությունը ճանաչել կարող են առավելապես հաղորդակցվելու, իսկ ավելի դիպուկ՝ հենց երկխոսելու միջոցով:

Պատահական չէ, որ արդի գիտությունը ևս փորձում է ինչ-որ կերպ արձագանքել նոր իրողություններին՝ առաջարկելով լուծման որոշակի ուղենիշներ: Այս առումով քաղաքագիտական հետազոտություններում վերաիմաստավորվում ու նոր կարևորություն է ձեռք բերում երկխոսության մասնավորապես քաղաքական երկխոսության հիմնախնդիրը: Եվ եթե սկզբնական շրջանում այն առավելապես դիտարկվում էր քաղաքական հաղորդակցության գծային մոդելների համատեքստում (Ն. Վիների «կիբեռնետիկայի հայեցակարգ», Կ. Դոյչի մոտեցումները քաղաքական համակարգի մասին), ապա վերջին շրջանում մասնագետներն արդեն բարձրաձայնում են քաղաքական համակարգում երկխոսութային կամ ինտերակցիոն հաղորդակցական մոդելների անցման անհրաժեշտության մասին[6]: Խնդիրների այս խմբին ուշադրություն սևեռելով՝ հանրային կապերի և հաղորդակցության հարցերի հետազոտությամբ զբաղվող արդի մի շարք մասնագետներ առաջ են քաշում այն դրույթը, որ իշխանության և հանրության հետ փոխգործակցության ոլորտում հաճախ կիրառվող իշխանության իրականացման մենախոսական մոտեցումներն արդյունավետության տեսանկյունից արդեն իրենց չեն արդարացնում: Շատերը նաև այդ հանգամանքով են բացատարում արդի իրողություններն առ այն, որ հանրային քաղաքականության իրացման ոլորտում այսօր թե՛ կայացած ժողովրդավարություններում և թե՛ կայացման ու կայունացման փուլեր ապրող կերպափոխվող քաղաքական համակարգերում պետության և հասարակության լայն շերտերի, պետության ու քաղաքացիական հասարակության, ինչպես նաև իշխանության և ընդդիմության հարաբերություններում առկա են խզումներ, օտարվածություն, անվստահության մեծ չափաբաժին: Պատահական չէ, որ GR-ը (Government Relations)

---

[5] Տե՛ս **Dalton R. J., Christian W.,** The Civic Culture Transformed From Allegiant to Assertive Citizens, Cambridge University Press, 2014, էջ 305, **Ն. Գ. Խաչատրյան, Ս. Հ. Մանուսյան, Ա. Կ. Մերոբյան, Ն. Ա. Գրիգորյան, Ա. Ռ. Հակոբջանյան,** Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում, Եր., 2014, էջ 75-94:

[6] Տե՛ս **Поцелуев С.** Диалог и квазидиалог в коммуникативных теориях демократии. Ростов-на-Дону, 2010, էջ 32:

սահմանվում է որպես «կազմակերպության և հասարակայնության միջև մշտապես գործող երկխոսություն (dialog), որի նպատակն է ամրապնդել դրանց միջև վստահությունը և հասնել փոխշահավետ արդյունքի: Բիզնես շրջանակների կամ հասարակական կազմակերպության ու պետության միջև հարաբերությունները մշտապես ընթացող երկխոսություն են, ինչպես վստահության ամրապնդման, այնպես էլ քաղաքական այդ ինստիտուտի (պետության) միջոցով կազմակերպության կարիքների բավարարմանն ուղղված»[7]: Այսպիսի մոտեցումների առկայությամբ պայմանավորված՝ արդեն 2000-ական թվականներից հանրության հետ կապերի ուսումնասիրությունների ոլորտում խոսվում է «երկխոսութային շրջադարձ» (Dialogical Turn of Public Relation) երևույթի մասին[8]: Հանրության հետ կապերի երկխոսութային մոդելների զարգացման, կարևորության և արդյունավետության հիմնահարցերը համակողմանի քննության առնելու առաջին փորձերից մեկն ընդունված է համարել Ջ. Գրյունիգի և Տ. Հանթի համատեղ աշխատանքը: Հետագայում ավելի կատարելագործելով իր մոտեցումները՝ Գրյունիգն առաջարկում է հասարակայնության հետ կապերի չորս մոդել. 1. մանիպուլյատիվ, 2. տեղեկատվական (լրագրողական), 3. երկկողմանի ոչ համաչափ երկխոսութային և 4. երկխոսութային երկկողմանի համաչափ[9]: Քանի որ առաջարկված մոդելներից առնվազն առաջին երկուսը տրամաբանորեն տեղավորվում են հաղորդակցության գծային մոդելի տեսակի մեջ, որը, ինչպես վերը նշեցինք, ենթադրելով առավելապես իշխանական մենախոսական պրակտիկաներ՝ արդյունավետորեն չի արձագանքում արդի պահանջներին, երկոսութային հաղորդակցության համատեքստում առավել նպատակահարմար է դիտարկել հեղինակի առաջարկած հաջորդ երկու մոդելները: Երկկողմանի անհամաչափ երկխոսութային մոդելի ամենակարևոր առանձնահատկություն է համարվում այն, որ մոդելի գործառման ժամանակ լայնորեն օգտագործվում են կիրառական սոցիոլոգիայի սահմանած էմպիրիկ հետազոտության մոդելները, որոնց նպատակն է ստանալ առավել համակողմանի պատկեր հանրային կարծիքի ու տիրապետող հանրային տրամադրությունների մասին: Սա կարևոր է այնքանով, որ այդ հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս որոշելու, թե հատկապես ինչպիսի տեղեկատվությունը կհարուցի հանրության դրական արձագանք: Հենց այս իմաստով է հաղորդակցությունը սույն մոդելով դառնում երկկողմանի: Թեև երկխոսութային հաղորդակցության դասական ընկալմամբ այս մոդելի դեպքում, իհարկե, գործ ունենք

---

[7] **Сморгунов Л. В., Тимофей Л. И.** GR-связи с государством: теория, практика и механизмы взаимодействия бизнеса и гражданского общества с государством. Учебное пособие. М, 2012. с. 49.

[8] Տե՛ս **Van Es R., Meijlink T. L.,** The Dialogical Turn of Public Relation Ethics // Journal of Business Ethics. 2000. Vol. 27, № 1–2, էջ 69–77:

[9] Տե՛ս **Зайцев А. В.** Диалогическая модель связей с общественностью Дж. Грюнига и совремменость // «Вестник костромского государственного университета им. Н. А. Некрасова», 2013, № 3, էջ 84:

գործառող հետադարձ կապի հետ, սակայն մեծ հաշվով սուբյեկտի կողմից տրամադրվող տեղեկույթը միայն կոչված է առաջացնելու ստացողի արձագանքը. գործընթացի զարգացումը դեպի հետագա փուլեր՝ համատեղ քննարկում, որոշման ընդունում կամ դրա հետ կապված պայմանավորվածությունների ձեռքբերում, չի ծավալվում: Նման դիտարկում այս մոդելի առնչությամբ անում է նաև Հավրան՝ շեշտելով, որ մոդելի հիմնական նպատակը լսարանը կառավարելն է, և որ այդպիսի կառավարումը կրում է սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններ[10]: Այսինքն, այս դեպքում օբյեկտը սուբյեկտի վրա հետադարձ ազդեցության լայն գործիքարան չունի: Սույն խնդիրը թերևս բավարարվում է Գրյունիգի առաջարկած հաղորդակցական չորրորդ՝ երկկողմանի համաչափ երկխոսութային մոդելի դեպքում, որտեղ արդեն գործ ունենք փոխգործակցության այնպիսի ձևի հետ, երբ «գործընթացի մասնակիցներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես լիիրավ սուբյեկտ՝ իրականացնելով և՛ տեղեկույթ տրամադրողի, և՛ ստացողի գործառույթ»[11]: Հետևաբար, այս դեպքում լիակատար պայմաններ են ստեղծվում համակողանի երկխոսության ծավալման համար, այլ կերպ ասած՝ մոդելը հանդես է գալիս որպես բաց հարթակ, որտեղ տարբեր խնդիրների շուրջ տարամետ դիրքերում հայտնված սուբյեկտները կարող են իրական քննարկումների ու համաձայնությունների միջոցով հանգել այնպիսի լուծումների, որոնք փոխշահավետ կլինեն գործընթացում ներգրավվածների համար: Ժողովրդավարության ընդհանուր տեսության և քաղաքացիական մշակույթի դիրքերից կարևորելով երկխոսության դերը՝ հասարակայնության հետ կապերի կանադացի մասնագետ Ռ. Պիրսոնը շեշտադրում է «փոխադարձության սկզբունքի» կարևորությունը: Նա դա ներկայացնում է մարդու հիմնարար իրավունքներից մեկի՝ իրեն և իր շահերին առնչվող տեղեկույթին լիակատար հասանելիության հնարավորության համատեքստում՝ ըստ այդմ էլ պնդելով, որ մարդն իրավունք ունի մասնակցելու իր շահերին առնչվող որոշումների ընդունման գործընթացին[12]: Դժվար չէ նկատել, որ Պիրսոնը երկխոսության իր հայեցակարգը դիրքավորում է հանրային կապերի ոլորտում, այսպես կոչված, էթիկական իմպերատիվի (an ethical imperative for public relations) համատեքստում: Այս հանգամանքով էլ պայմանավորված՝ Պիրսոնը երկխոսությունը ներկայացնում է որպես «կորպորատիվ վարքի լեգիտիմության կարևոր պայման»[13]: Խնդրի էթիկական կողմի վերաբերյալ այլ դիրքորոշում ունեն հետազոտողներ Մ. Քենթը և Մ. Թեյլորը՝ նշելով, որ երկխոսությունը կարող է գործադրվել ինչպես բարոյական կողմի պահպանմամբ, այնպես էլ հակառակ կերպով: Հետա-

---

[10] Տե՛ս **Гавра Д. П.** Основы теории коммуникации: Учебное пособие. СПб., 2011, էջ 283:

[11] **Зайцев А. В.,** նշվ. աշխ., էջ 86:

[12] Տե՛ս **Pearson R.,** Reviewing Albert J. Sullivan's Theory of Public Relations Ethics // Public Relations Review. 1989, Vol. 15, № 2, էջ 52-62:

[13] **Зайцев А. В.** Диалогическая модель связей с общественностью: возникновение, состояние, перспективы // "Теории политики, экономики и управления". 2013, с. 11.

զոտողներն առհասարակ երկխոսությունը ներկայացնում են ոչ թե որպես զուտ գործընթաց, այլ հաղորդակցության և հարաբերությունների արդյունք[14]: Ըստ այս մոտեցման՝ երկխոսությունը ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են «վստահությունը», «ռիսկը» և «խոցելիությունը»: Եթե երկխոսությունը չի կարող զերծ մնալ այս գործոնների անմիջական ազդեցություններից, ապա, որպես իրավիճակի կայունացման եղանակ, Քենթն ու Թեյլորն առաջարկում են երկխոսությանը համակցել «ռազմավարական հաղորդակցությունը» (startegic communication)՝ որպես ավելի արդյունավետ միջոց: Երկխոսությունը ներկայացնելով որպես կողմնորոշում (orientation)՝ նրանք նշում են, որ երկխոսությունը ներառում է հինգ հատկանիշ կամ սկզբունք[15]. 1. փոխադարձություն կամ երկուստեքություն (mutuality), երբ երկխոսության կողմերը ճանաչում են մեկը մյուսի սուբյեկտայնությունը, 2. միասնականություն կամ անխզելիություն (propinquity), որը մի կողմից ցույց է տալիս կազմակերպության խորհրդակցելու հակվածությունը, իսկ մյուս կողմից հասարակության համար միասնականությունը նշանակում է իր պահանջների ձևակերպման և ներկայացման կարողություն, 3. ապրումակցման (empathy) պատրաստակամություն, որն առաջին հերթին ենթադրում է վստահություն սերմանելու նպատակով հատուկ հոգեբանական մթնոլորտի ստեղծում, 4. ռիսկ (risk). ցույց է տալիս խոցելիության խնդիրն առ այն, որ երկխոսության ընթացքում պահպանվում է անկանխատեսելի արդյունքների հասնելու հավանականությունը, 5. հանձնառություն (commitment). ցույց է տալիս դերակատարների անկեղծությունը, բանակցելու և մեկնաբանելու հակվածությունը: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ չնայած մեծ արդյունավետությանը և պահանջվածությանը, այդուհանդերձ պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ երկխոսությունը պարզ գործընթաց չէ. այն բազմաշերտ երևույթ է և առնչվում է այնպիսի դժվար հարաբերությունների կառուցմանը, ինչպիսիք ինտերսուբյեկտիվ հարաբերություններն են:

Հասարակայնության հետ կապերի երկխոսութային մոդելի մշակման տեսանկյունից մեծ կարևորություն ունի Վիեննայի համալսարանի գիտական հաղորդակցության ինստիտուտի ներկայացուցիչ, դոկտոր Ռ. Բուրկարտի՝ 1991 թվականին «Publizistik» ամսագրում հրապարակած՝ համաձայնությանը միտված հասարակայնության հետ կապերի (Consensus-oriented public relations-COPR) տեսությունը[16]: Հիմնվելով Հաբերմասի հաղորդակցական գործողությունների տեսության վրա՝ Բուրկարտը հասարակայնության հետ կապերն արդեն ներկայացնում է որպես համաչափ երկխոսություն երկխոսելու պատրաստ կողմերի միջև իրենց խորհրդանշական սոցիալական և հաղոր-

---

[14] Տե՛ս **Kent M. L., Taylor M.,** Toword a dialogic theory of public relations// Public Relations Review 28, 2002, էջ 24:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 24-29:

[16] Տե՛ս **Заицев А. В.** Р. Буркарт: PR-диалог и консенсус-ориентированние связи с обшественностью // "Общество: политика, экономика, право", 2013, № 4, էջ 28:

դակցական փոխգործակցության ոլորտներում[17]: Իր տեսական մոդելը կառուցելով արդի իրողությունների հաշվառմամբ՝ Բուրկարտը հատուկ շեշտում է, որ պետք է նկատի առնել հանրային կառավարման ոլորտի՝ հասարակության կողմից միշտ քննադատության թիրախում լինելու հանգամանքը, քանի որ, որպես կանոն, տարբեր խմբեր ու անհատներ միշտ էլ թերահավատորեն են մոտենում իշխանությունների տրամադրած տեղեկատվության իսկությանը: Խնդիրն ավելի է բարդանում, երբ խոսքը վերաբերում է վիճահարույց մոտեցումներին կամ հանրային կարծիքից տարամիտվող տեսակետների ու գաղափարների առաջմղմանը: Ելնելով այս իրողությունից՝ Բուրկարտն առաջարկում է համաձայնությանը միտված հասարակայնության հետ կապերի երկխոսութային մոդելը կիրառել հատկապես այնպիսի իրավիճակներում, երբ հնարավոր է հակամարտություն կամ առճակատում: Այս առումով երկխոսութային պրակտիկան կիրառողների համար առաջնային են դառնում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են պարզությունը, հավասարը հավասարի հետ շփվելու պատրաստակամությունը, թույլ տրված սխալների ընդունումը[18]: Բուրկարտի երկխոսութային մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝ տեղեկույթի հաղորդում (ընդ որում՝ շատ կարևոր է, թե ով է հաղորդում. առաջնային աղբյուրի՞ց է այն տրվում, թե՞ երկրորդային), այնուհետև՝ եթե տեղեկույթը հարուցում է հասարակության ոչ միանշանակ արձագանքը, ապա պետք է գործի դնել քննարկումներ, պարզաբանումներ ներկայացնելու գործիքարանը, հաջորդ փուլում շեշտադրել տրամադրված տեղեկույթի ճշմարտացիությունը՝ հանրության մեջ կասկածները նվազագույնի հասցնելու համար, իսկ վերջին փուլը ենթադրում է արդեն փոխըմբռնման հասնելուն ուղղված ջանքեր: Ակնհայտ է, որ համաձայնությանը միտված երկխոսութային իր մոդելով Բուրկարտը առաջարկում է ռազմավարական պլանավորման մեթոդաբանություն, որը բարձր արդյունավետություն կարող է ունենալ հակամարտությունների ժամանակ, առճակատման կանխարգելման կամ դրանց ընթացքը փոխակերպելու գործում: Քաղաքական երկխոսության գործընթացում հասարակության դերակատարությունը սուբյեկտայնության համատեքստում է դիտարկում նաև Ջորջ Մեյսոնի համալսարանի պրոֆեսոր Կ. Բոցանն իր երկխոսութային հաղորդակցության մոդելում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքական երկխոսության ավանդական, գծային մոդելները հանրության համար սահմանում են երկրորդային դեր՝ Բոցանը համաչափ երկխոսութային իր մոդելի առանցքային տարրն է դարձնում «համաստեղծագործություն» (cocreational) հասկացությունը՝ այդ կերպ հենց բնորոշելով հասարակությունը[19]: Ըստ այդ մոդելի՝ հասարակությունը երկխոսության գոր-

---

[17] Տե՛ս **Burkart R**. On Jurgen Habermas and public relations // Public Relations Review, 33, (2007), էջ 251:

[18] Տե՛ս նույն տեղը, էջ 252:

[19] Տե՛ս **Botan C., Taylor M.,** Public Relations: State of the Field // Journal of Communication. 2004. Vol. 54, № 4, էջ 645-661:

ծընթացում հանդես է գալիս որպես համաստեղծագործող և ոչ թե տեղեկույթի սոսկ սպառող: Բոցանի մոտեցումը մեծ արդյունավետությամբ կիրառվում է քաղաքական մարքեթինգի շրջանակներում՝ հատկապես քարոզչական և նախընտրական արշավների ժամանակ, երբ պոտենցիալ ընտրողներին ներգրավում են որպես այդ արշավների մաս: Քաղաքական հաղորդակցության երկխոսութային մոդելների առումով հանրային կառավարման համակարգի արդիականացումը հատկապես անցումային փուլին հատուկ կերպափոխվող քաղաքական համակարգերում դիտարկելիս քաղաքագետ Մարիամ Մարգարյանն առաջ է քաշում և հիմնավորում այն մոտեցումը, որ քաղաքական զարգացման ճգնաժամերը հաղթահարելու և առկա մարտահրավերներին պատասխանելու համար հանրային կառավարման համակարգում պետք է տեղի ունենա կառավարող ընտրանի-գործարար ընտրանի-արհեստակցական միության (տրիպարտզիմ) ղեկավարների փոխհարաբերությունների նպատակամետ արդիականացում՝ պետություն-քաղաքացիական հասարակություն-մասնավոր հատված երկխոսության զարգացման միջոցով[20]: Մեկ այլ դեպքում նա մի կողմից լավ կառավարման բնութագրիչների շարքում է ներկայացնում համաձայնությանը միտված հանրային կապերը, իսկ մյուս կողմից հիմնավորում և մատնանշում է այդ ամենի կարևորությունն ավելի գլոբալ հայեցակարգի՝ խաղաղության մշակույթի հաստատման գործում[21]:

Այսպիսով, որպես ցուցիչ քննության առնելով Հայաստանում ընտրական ու հետընտրական գործընթացներն ու դրանցով պայմանավորված ներքաղաքական իրողությունները, դրանց ընկալման ու մեկնաբանման շուրջ հասարակության, իշխանության և ընդդիմության մոտեցումները, պարզ է դառնում այդ հարաբերությունների մեծ մասամբ ոչ երկխոսութային լինելը: Փոխարենը լայնորեն տարածված են սուր և կոնֆլիկտային բնույթի քաղաքական մենախոսութային պրակտիկաները՝ «բաժանարար գծերի» խորացման ոչ ցանկալի հեռանկարով: Հետևաբար, Հայաստանի կերպափոխվող քաղաքական համակարգի հետագա ժողովրդավարացումն ապահովելու կարևոր տարրերից մեկի՝ քաղաքացիական մշակույթի համատեքստում քաղաքական երկխոսության համաչափ երկկողմանի մոդելների կիրառումը հնարավորություն կտա.

- Կանխարգելելու կամ առնվազն մեղմելու քաղաքական դաշտում, հատկապես հետընտրական փուլերում, սուր առճակատումներն ու կոնֆլիկտային վիճակները:
- Կարևորելու երկկողմանի համաչափ երկխոսութային պրակտիկաներին դիմելը՝ որպես իրավիճակի հնարավոր լուծման արդյունավետ գործիքարան:

---

[20] Տես՝ **Մ. Մարգարյան,** Հանրային կառավարման համակարգի արդիականացումը որպես բազմավեկտոր գործընթաց // «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2014 1-2, էջ 261-269:

[21] Տե՛ս **Մ. Մարգարյան,** «Լավ կառավարման սկզբունքների» ներդրումը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում խաղաղության մշակույթի հաստատման գործընթաց // «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2013, 1-2, էջ 81-88:

▪ Քաղաքական որոշումների նախագծման, ընդունման և իրականացման փուլերում հաշվի առնելու քաղաքական ընդդիմության, քաղաքացիական հասարակության և հասարակական այլ խմբերի ու շերտերի սուբյեկտայնությունը:

▪ Կառավարման խորհրդարանական մոդելին լիովին անցնելու դեպքում ապահովելու խորհրդարանական մշակույթի կայացման ու զարգացման գործուն հիմքեր:

▪ Կանխարգելելու քաղաքական ինստիտուտներից հանրության օտարվածության հետագա խորացումը՝ նպաստելով դրանց հանդեպ վստահության բարձրացմանը:

▪ Հանդես գալու որպես քաղաքական սոցիալականացման արդյունավետ մոդել՝ այս կերպ ապահովելով քաղաքացիական մշակույթի կարևորագույն գործառույթներից մեկի՝ քաղաքական համակարգի կայունության պահպանման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր – *քաղաքացիական մշակույթ, քաղաքական երկխոսություն, քաղաքական խոսույթ, երկխոսությային շրջադարձ*

КНЯЗ САРОЯН – *Политический диалог в системе гражданской культуры.* – Характерная черта политической жизни в Армении – острые, конфликтные отношения. Они возникают на уровне коммуникаций между властью и оппозицией, властью и обществом. В статье на основе исследований двусторонних диалогических концепций предлагается рассмотреть политический диалог как инструмент урегулирования конфликтных ситуаций. Политический диалог – важный элемент гражданской культуры, и в статье обосновывается, что применение диалогических практик может оказаться в Армении весьма результативным.

Ключевые слова: *политическая культура, политический диалог, диалогический поворот*

KNYAZ SAROYAN – *Political Dialogue in the System of Civic Culture.* – In the article, on the bases of analysis of the Armenian domestic political events, it is demonstrated that one of the main peculiarities of Armenian political life is believed to be tense, conflicting relations. It is expressed in the communication levels between authority and opposition and on the other hand, between authority and the society. Based on the analysis of the public relations' modern two-sided symmetric dialogical concepts, the article suggests using political dialog as an effective tool for the improvement of the situation. Considering the political dialogue as an element of sustainable civic culture, the article argues that the use of dialogical practices can have a positive impact on the further democratization process of the Republic of Armenia.

Key words: civic culture, political dialog, political discourse, dialogical turn